

ՍԱՀՄՈՍ 110

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԵՐԸ իշխանություն է տալիս Թագավորին	Մեսիայի թագավորության հռչակումը	ՏԵՐԸ խոստանում հաղթանակ էր Թագավորին (Արքայական Սաղմոս)	ՏԵՐԸ և Նրա ընտրյալ Թագավորը	Մեսիա Քահանան
<u>MT ներածություն</u> Դավթի Սաղմոսը				
110:1-3	110:1-2	110:1 110:2-4	110:1-3	110:1 110:2 110:3
110:4-7	110:3-4 110:5-7	110:5-7	110:4 110:5-7	110:4 110:5-7

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԼՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը մեկնաբանելը դժվար է, քանի որ չգիտենք պատմական ստույգ միջավայրը: Որոշակի վկայություն կա այս Սաղմոսի շուրջ ոչ բնագրային, ոչ ներշնչված MT մակագրությունից որպես «Դավթի Սաղմոս»: Հիսուսի կողմից Մատթ.22:41-46, Մարկ.12:35-37, Դուկ.20:41-44-ում հաստատումը և ՆԿ-ում շատ այլ հատվածներում նույնպես ցույց է տալիս ոչ միայն այս Սաղմոսի, այլ Դավթի կյանքից ինչ-որ մի ժամանակի պատմական միջավայրի կարևորությունը: Այս Սաղմոսը ՆԿ-ում ամենաշատն է մեջբերվել, քան որևէ այլ Սաղմոս (այսինքն՝ այն դիտարկվում է որպես Մեսիական և ուղղակիորեն անդրադառնում է Հիսուսին Էսիաստողոզիական միջավայրում): Ոմանք ենթադրում են, որ լավագույն պատմական միջավայրը Դավթի կյանքում Աստծո հրաշալի, սքանչելի խոստմանը արձագանքելն էր, որը արձանագրված է 2 Թագ.17:12-16-ում: Ուրիշներն էլ ենթադրում են, որ Դավիթն այս խոսքերն ասել է իր ծեր հասակում՝ Մոդոնոնի թագավոր թագադրվելուց հետո: Պատճառն այն է, որ Դավիթը կոչում է նրան «իմ տեր», որը խիստ անսովոր է հնչում:

Բ. Սաղմոսները մեկնաբանելու մեկ այլ բանալի է, բացի պատմական միջավայրից, գտնել հեղինակի մտքերի տրամաբանական պրոգրեսը՝ գործընթացը. մեր համար որպես արևմտյան

ժողովուրդ, սա կատարվում է պարբերության բաժանումների միջոցով: Այս գրական բաժինները ներշնչված չեն, սակայն դրանք օգնում են մեզ փորձելու գտնել համարների միջև տրամաբանական և գրական կապը: Նոր Ամերիկյան Ստանդարտ (NASB) թարգմանությունը և Նոր Միջազգային Տարբերակ (NIV) թարգմանությունը այս Սաղմոսը բաժանում են 1-3 և 4-7 համարների: Համեմայն դեպս Վերանայված Ստանդարտ Տարբերակը (RSV) այն բաժանում է 1-4 և 5-7 համարների: Ամերիկայի Հրեական Հրատարակչության Ընկերության (JPSOA) կողմից կատարված նոր թարգմանությունը բաժանում է այս Սաղմոսը 1-ին համարը ինքնին, ապա գուգահեռ երկվորյակներ՝ 2 և 3-ը, 4 և 5-ը միասին, և 6 և 7 համարները միասին: Ինձ համար կարծում եմ այս Սաղմոսի կառուցվածքի լավագույն հնարավոր տարբերակը տվել է Դոկ. Քիդները *ՀԿ Թիմոթեյ Մեկնությունների Շարքեր*, գրքում: Նա պնդում է, որ Աստծո կողմից երկու մեջբերումներ կան այստեղ՝ համար 1 և 4-ը: Ապա Աստծո հայտարարությունների միջոցով տեղի ունեցած կոնֆլիկտը նկարագրվում է համար 2 և 3-ում և 5-7-ում:

- Գ. ՆԿ-յան այն հատվածները, որտեղ մեջբերվում է Սաղմոս 110-ը:
1. Սաղմոս 110:1ա – Մատթ. 22:44, Մարկ. 12:36, Դուկ. 20:42, 43, Գործք 2:34,35, Եբր. 1:13
 2. Սաղմ. 110:1բ – Մատթ. 26:64, Գործք 7:55, 56, Հռոմ. 8:34, Եփես. 1:20, Կող. 3:1, Եբր. 1:3, 8:1, 10:12, 12:2
 3. Սաղմ. 110:1գ – 1 Կորնթ. 15:25, Եփես. 1:22, Եբր. 10:13
 4. Սաղմ. 110:4 – Եբր. 5:6, 6:20, 7:17,21
 5. Սաղմ. 110:5գ – Հռոմ. 2:5, Հայտն. 6:17
- Դ. Եբրայեցիների գրքում առկա ամենադժվար երկու համարներն են Սաղմոս 110:3 և 7-ը: Փառք Աստծուն, որ դրանք այդքան էլ կարևոր տեղ չեն գրավում այս Սաղմոսի ամբողջական մեկնության հարցում: Խնդրում եմ ստուգե՛ք ձեզ հասանելի թարգմանությունները նկատելու այն մեծ տարբերությունները, որ ընդգրկվել են թարգմանիչների կողմից հստակեցնելու եբրայերեն այս խրթին համարների բուն էությունը:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 110:1-3

¹ՏԵՐՆ իմ Տիրոջն ասաց. «Նստի՛ր Իմ աջ կողմում, Մինչև քո թշնամիներին ոտքերիդ պատվանդան դարձնեմ»:

²ՏԵՐԸ քո զորության գավազանը Միտնից է ուղարկելու. Իշխի՛ր թշնամիներիդ մեջ:

³Քո զորության օրը ժողովուրդդ հոժարակամ կլինի Սրբության զարդարանքներով. Առավոտվա արգանդից քո մանուկները ցողի պես կլինեն:

110:1 «ՏԵՐՆ ասաց» Ուշադրություն դարձրեք «ՏԵՐԸ» ամբողջությամբ մեծատառերով է, հետևաբար սա Աստծո ուխտի անունն է՝ ՅԱՀՎԵ, որը եբրայերենի «լինել» ԲԱՅԻ ձևն է (տես՝ Ելից 3:14): Այստեղ խոսում է ուխտի Աստվածը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

❖ **«Իմ Տիրոջը»** Երկրորդ տերմինը Տեր բառի համար ունի միայն մեկ մեծատառ՝ «Տ» և հետևաբար արտացոլում է եբրայերենի *Ադոնայր* («Իմ Տեր»): Եբրայերեն ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 101) նշանակում է «սեփականատեր», «ամուսին», «տեր», «վարպետ»: Ակնհայտ է, որ սա անդրադառնում է Մեսիային:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԵՐ (Adon և Kurios)

❖ **«նստիր»** Այս «նստել» (BDB 442, KB 444, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) տերմինը դիտարկվել է մի քանի կերպ: Համատեքստում այն կարծես թե վերաբերում է պատվարժան վայրի՝ ՅԱՀՎԵԻ կողքին, տիեզերքի գահի վրա: Եթե համատեքստն այդպիսին է, ապա մենք խոսում ենք ՅԱՀՎԵԻ հետ միաժամանակ իշխող մեկի մասին, և եթե դա ճիշտ է, ապա սա հզոր անդրադարձ է Տիրոջ Աստվածությանը:

Եթե «նստել» բառը վերաբերում է քահանայի, թագավորի ավարտած գործին, որը կարծես թե ակնարկ է մեջբերված Եբր. 1:2-3, 10:12-13-ում, ապա «նստելը» անդրադառնում է կատարված գոհաբերության գործին և Մեսիայի՝ Քահանայապետի տիրակալությանը (տես՝ Չաքարիա 3-4):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ԻՑ

❖ **«Իմ աջ կողմում»** Մա անտրոպոմորֆիկ արտահայտություն է, որը խոսում է մարդկային մարմնի ամենաուժեղ բազկի մասին: Շատ մարդիկ աջիկ են, հետևաբար, այդ ձեռքը կիրառվում է որպես պատվի, ուժի, իշխանության կամ գերակայության խորհրդանիշ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ԱՆՏՐՈՊՈՍՈՐՓԻԶՄ)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ

❖ **«մինչև»** Այս ՆԱԽԴԻՐԸ (BDB 723 III) ավելի շատ խնդրահարույց բառ է ինձ համար, քանի որ կարծես թե ենթադրում է, որ այս պատվարժան և իշխանության վայրը՝ Աստծո աջ կողմում, սահմանափակված է ժամանակի մեջ, մինչև որ որոշ դեպքեր տեղի ունենան, սակայն այն ունի լայն իմաստային կիրառություն: Մեսիայի թագավորությունը (տես՝ Եսայի 9, Միքիա 5) փոխվելու է Հոր թագավորության (տես՝ 1 Կորնթ. 21:24-25):

Սակայն, այս նույն երբայերեն բաղաձայներով տերմինը կարող է հնչել որպես «աթոռ»: Այս իմաստով, «դարձներ» ԲԱՅԸ կարող է ունենալ երկու ՀԱՅՅԱԿԱՆ կամ ենթականեր՝ «աթոռ» և «պատվանդան»: Աստրական որմնանկարներից և փորագրություններից գիտենք, որ թագավորի գահը և սեղանը հանգչում էին ստրուկների մեջքին, և հնարավոր է, որ սա է Սաղմ. 110:1-ում այս արտահայտության ակնարկը:

❖ **«ոտքերիդ պատվանդան»** Դարձյալ, ակնհայտ է, որ սա թշնամիների վրա հաղթանակի հնագույն արևելյան նկարագրություն է (տես՝ Հեսու 10:24):

110:2 «ՏԵՐԸ քո գործության գավազանը Սիոնից է ուղարկելու» Մի քանի կերպեր են եղել այս համարը թարգմանելու համար, սակայն պարզ է, որ մենք խոսում ենք ՅԱՀՎԵԻ տիեզերական թագավորության մասին՝ սկսած Երուսաղեմից շրջանաձև տարածումով դեպի ամբողջ աշխարհը: Բազմաթիվ ՀԿ-յան ակնարկներ կան այս իրադարձության շուրջ: Մա կարծես թե խոսում է Մեսիայի տիրակալությանը մասին որպես ՅԱՀՎԵԻ ներկայացուցիչ:

«Գավազան» տերմինը (BDB 641) սկզբնապես նկատի է ունեցել փայտից պատրաստված ինչ-որ բանի:

1. պատերազմի համար մահակ
2. գավազան հովվելու համար

Այն սկսել է խորհրդանշել իշխանություն և գորություն: ՅԱՀՎԵԻ թագավորության համատեքստում այն դարձյալ կարող է նկատի ունենալ ՅԱՀՎԵԻ իշխանությունը և գորությունը ներկայացուցիչ հանդիսացող առաջնորդի միջոցով (այսինքն՝ Մովսեսի գավազանը, տես՝ Ելից 4, 7):

❖ **«Սիոն»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՈՆ

❖ **«իշխի՛ր թշնամիներիդ մեջ»** «Իշխել» ԲԱՅԸ (BDB 921 I, KB 1190, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) չափազանց խիստ տերմին է (այսինքն՝ «իշխանություն ունենալ», տես՝ Դան . 7:13-14): Սա նման է Սաղմոս 2-ին (հատկապես Սաղմ . 2:9): Սաղմոս 2 շատ ընդհանրություններ ունի Սաղմոս 110-ի հետ:

1. երկուսն էլ բովանդակում են ՅԱՀՎԵՆ և Իր Մեսիան
2. երկուսն էլ բովանդակում են ընդհարում այդ ընկած աշխարհի կայսրությունների հետ

110:3 «Քո զորության օրը ժողովուրդը հոժարակամ կլինի սրբության զարդարանքներով»
Նկատե՛ք այն հակադրությունը, թե ինչպես է Մեսիան վարվելու Իր թշնամիների հետ և թե ինչպես է Մեսիայի ժողովուրդը միավորվելու հանուն Նրա: Սա նման է Դատ . 5:2-ի կամավորական գործին: Այս արտահայտությունը «հոժարակամ կլինի» հիմնականում կիրառվում է կամավոր նվերների համար՝

1. խորանը կամ հետագայում տաճարը կառուցելու համար
2. տաճարի զոհերի համար

Սա կարող է կապված լինել Հռոմ . 12:1-ի հետ, որտեղ հավատացյալներն իրենց մարմինները կենդանի զոհ են մատուցում Աստծուն: Սա Աստծո ժողովրդի Մեսիայի նվիրման գեղեցիկ նկարագրություն է:

UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 393) առաջարկում է ձայնավորների մեջ փոփոխություն, որպեսզի ձևակերպվի՝

1. «դու օժտված ես արքայական պարզկներով» - NEB
2. «Դու շահում ես քո ժողովրդի հարգանքը» - REB

Սակայն, UBS այս տարբերակը գնահատում է միայն “C” (բավականին կասկածելի): JPSOA թարգմանում է այս արտահայտությունը որպես «Քո ժողովուրդը հոժարությամբ առաջ է գալիս պատերազմի օրը», որը հետևում է MT թարգմանությանը:

110:3բ

NASB

NKJV, Peshitta

NRSV

REB

NJB

TEV

LXX

JPSOA

«սրբության զարդարանքներով»

«սրբության գեղեցկությամբ»

«սուրբ լեռների վրա»

«սուրբ հանդերձանքներով զարդարված»

«սուրբ պատիվ»

«սուրբ բլուրների վրա»

«սրբերի փառքերի մեջ»

«հրաշափառ սրբությամբ»

Այս համարը դիտարկելու երկու տարբեր կերպ կա: MT տալիս է «սուրբ շքեղությամբ»:

1. ִרְרָה־ב - շքեղությամբ

2. ִרְרָה־ב - սարերի վրա (այսինքն՝ Երուսաղեմի բլուրները)

Սակայն, որոշ թարգմանություններ փոխում են երբայերեն «դ» տառը «ռ»-ով և թարգմանում այն «սրբության սարերի վրա», և սրան հետևում է երբայերենի Միմնաքուս թարգմանությունը, Ջերոմի թարգմանությունը և RSV: UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 394) այս տարբերակը գնահատում է “C” (բավականին կասկածելի), սակայն նախընտրում է MT-ից առավել:

❖ **«առավոտվա արզանդից»** Հայտնի չէ, թե արդյոք սա նկարագրում է՝

1. հենց Մեսիային
2. Նրա ցողի պես բազմաթիվ զորքը
3. առատության և հավերժության նկարագրություն

Քանի որ Պաղեստինի որոշ մասերում ցողն ամեն առավոտ արևածագի հետ է գալիս մեծ առատությամբ, շատ մեկնաբաններ պնդում են, որ սա առատությանը վերաբերող նկարագրություն է:

Սա խրթին համար է: JPSOA ասում է «Երբայերենի նշանակությունը անհայտ է»:

❖

NASB
NKJV, NJB, REB
NRSV
TEV
Peshitta
JPSOA
LXX

«Քո երիտասարդությունը»
«Քո երիտասարդության»
«քո մանուկները կգան քո մոտ»
«Քո երիտասարդները»
«ես ծնեցի քեզ որպես մանուկ դարեր առաջ»
«երիտասարդների»
«Ես քեզ ծնեցի»

UBS Տեքստային Նախագիծը (Էջ՝ 396) առաջարկում է ձայնավորների փոփոխություն, որի արդյունքում ստացվում է «Ես քեզ ծնեցի» (տես՝ LXX, Peshitta, Vulgate, տես՝ NIDOTTE, հատոր 2, էջ՝ 124, #11), սակայն առաջարկությունը գնահատում է “C” (բավականին կասկածելի), մինչդեռ նախընտրում է ավելին, քան MT: LXX-ը ԴԴԴԴ բառը ընդունում է որպես ԴԴ՝ ԲԱՅԻ ձև (BDB 408) «ծնել» կամ «ծնունդ տալ»: «Մանուկներ» խոսքը բխել է հենց այս ԲԱՅԻՑ՝ ԴԴԴԴ (տես՝ NIDOTTE, հատոր 2, էջ՝ 455):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 110:4-7

⁴ՏԵՐԸ երդվել է ու չի զղջալու.
«Դու հավիտյան քահանա ես ըստ Մելքիսեդեկի կարգի»:
⁵ՏԵՐԸ քո աջ կողմում, Իր բարկության օրը
Թագավորներ է ջարդելու:
⁶Նա հեթանոսների մեջ դատաստան է անելու,
Մարտադաշտը մեռելներով է լցնելու,
Շատ երկրների գլխավորներին խոցելու է:
⁷Ճամփի մեջ խմելու է գետից.
Դրա համար է գլուխը բարձրացնելու:

110:4 «ՏԵՐԸ երդվեց» ԲԱՅԸ (BDB 989, KB 1396) *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ է: Սա շատ հզոր կերպ է հաստատելու, որ այն ինչ Աստված ասում է՝ ճիշտ է և միշտ ճիշտ է լինելու: Խնդրում եմ կարդացեք Եբր. 6:16-18, որտեղ Աստված ասում է երկու անփոփոխ բաները Իր խոստումներն են և Իր երդումը: Մեր հիմնական վստահությունը Աստծո վստահելիության վրա է, երբ Նա խոսում է և խոստանում վստահելի է:

«Երդվել» բառը Սաղմ. 110:4-ում գուցա հեռ է 110:1-ի «ասել» բառին:

❖ **«ու չի զղջալու»** Սա ևս մեկ մարդաբանական արտահայտություն է (բառացի՝ «մտափոխվել», BDB 636, KB 688, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ), որը կիրառում է մարդու զղջալու կամ ապաշխարելու նմանությունը, որպեսզի նկարագրի այն ինչ Աստված **չի անի** (տես՝ Եբր. 7:21):

Ենթական ըստ երևույթին ՅԱՀՎԵՆ է: Հետաքրքիր է, թե արդյոք Սաղմոս 110:5-7-ի մյուս ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ նկատի ունեն հաղթանակած, զորավոր ՅԱՀՎԵՆ կամ Նրա երկրավոր ներկայացուցչին (այսինքն՝ Իր ուխտի ժողովրդի թագավորը):

❖ **«ըստ Մելքիսեդեկի կարգի»** Ամերիկայի Հրեական Հրատարակչության Ընկերությունը (JPSOA) սա թարգմանել է «դու հավիտյան քահանա ես, արդար թագավոր՝ իմ հրամանով»: «Մելքիսեդեկի կարգը» մի քանի կերպ է հասկացվել:

1. նրա անունը նշանակում է «արդարության թագավոր» (BDB 575, KB 593)
2. նրա քաղաքը Սաղեմն էր, այսինքն՝ Երուսաղեմը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱՂԵՄ)
3. ՀԿ-ում նա միակ անձն էր, որը թե՛ թագավոր էր և թե՛ քահանա

ՆԿ-յան քննարկումը Մելքիսեդեկի մասին գտնվում է Եբրայեցիների գրքում (տես՝ Եբր. 5:6,10, 6:20, 7:1,10,11,15,17): ՀԿ-յան դեպքը գտնվում է Ծննդ. 14:18-20-ում: Մելքիսեդեկի մասին պատմվում է, քանի որ Աբրահամը նրան տասանորդ վճարեց (այսինքն՝ Ծննդ. 14:20), ուստի ըստ հրեական հաշվարկի, նա ավելի գերազանց քահանայություն ուներ, քան հրեական քահանայությունը:

1. նա կարևորագույն քաղաքից է

2. նա ունի ճիշտ անունը
3. նա գրավում է ճիշտ պաշտոն՝ քահանա-թագավոր

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

❖ Ուշադրություն դարձրե՛ք «հավիտյան» բառի կիրառությունը: Սա ենթադրում է էսկատոլոգիական միջավայր, անձ, և հաղթանակ: Եթե ՆԿ-ը ներշնչված է (և դա այդպես է), ապա այս Մաղմուսը նկատի ունի հատկապես Հիսուս Նազովրեցուն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՎՎԻՏՅԱՆ ('olam)

110:5 «ՏԵՐԸ քո աջ կողմում» Սա մեկ այլ նկարագրություն է Մաղմ. 110:1բ-ից: Կարծում եմ չկա իրական աստվածաբանական կարևորություն այս տարբերության մեջ: Այն պարզապես նշանակում է, որ Մեսիային հենց ՅԱՀՎԵԻ կողմից տրված է լինելու իշխանություն, օգնություն և քաջակրություն (տես՝ Մաղմ. 110:4):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉԵՌՔ

110:5,6գ «Իր բարկության օրը թագավորներ է ջարդելու» Թագավորներն այստեղ կիրառվում են որպես հեթանոսների գորքերի վրա Աստծո հաղթանակին անդրադարձող կերպ (նկատե՛ք, «թագավորներ»՝ 110:5, «ազգեր»՝ 110:6, «գլխավորներ»՝ 110:6 ենթադրում է համընդհանուր նկարագրություն. NRSV տալիս է «ընդարձակ երկիր» 110:6գ-ում): Այս նույն էսկատոլոգիական հականարությունը կարելի է տեսնել Մաղմոս 2 և Հայտնություն 19:11-21-ում:

110:6ա «Նա հեթանոսների/ազգերի մեջ դատաստան է անելու» Սա ակնարկում է էսկատոլոգիական միջավայր: Դարձյալ, Աստված ամբողջ աշխարհի հետ է գործ ունենալու, թե՛ դատաստանի և, չնայած այստեղ այն չի սահմանվում և չի ենթադրվում, թե՛ Իր ողորմության հարցում:

110:6գ

NASB

NKJV

NRSV, REB

Peshitta

LXX

JPSOA

«մի լայնարձակ երկիր»

«շատ երկրներ»

«լայնարձակ երկիրը»

«երկրի վրա»

«շատերի երկրի վրա»

«հեռու և ընդարձակ»

Այս համարը ընթերցելիս այս հարցերն են առաջանում՝

1. Արդյո՞ք սա ինչ-որ հատուկ պատերազմի է վերաբերում (այսինքն՝ Դավիթ Թագավորի):

2. Արդյո՞ք սա վերաբերում է դատաստանի օրվան (այսինքն՝ Դավթի սերնդից Մեսիային):

Այս հարցերն առաջանում են՝

1. քանի որ Մաղմուսի պատմական միջավայրը երկակի է

2. *erets* –ի նշանակության պատճառով, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՄԴ

110:7 Այս համարը դժվար է Եբրայերենում, այնքան՝ դժվար, որ գիտնականները պնդում են, որ կորցրել են տեքստի մի մաս: Ինչ էլ որ լինի ստույգ նշանակությունը, ակնհայտորեն հաղթանակի սիմվոլ է (այսինքն՝ Աստծո հաղթանակը բոլոր Նորան հակառակվողների հանդեպ): Նկարագրությունը կարծես թե քաղված է փախչող, պարտված թշնամու գաղափարից և նրան հետամուտ լինող հաղթողի, որը ժամանակ է տրամադրում ջրերի խաչմերուկի մոտ թարմանալու, հետևաբար և իր գորությունը նորոգելու:

«Գլուխը բարձրացնելու» մյուս հավանական մեկնաբանությունը գտնվում է Մաղմ. 3:3 և 27:6-ում, որտեղ Աստծո Մեսիան է որպես արդար Դատավոր բարձրացնում Իր ժողովրդի գլուխը:

Ինչպիսի ակնարկ էլ որ սա լինի՝

1. Մեսիայի գործությունն ու հասունությունը,
2. թե՛ Նրա ողորմած գործողությունը Իր ժողովրդի հանդեպ բոլոր հակառակությունները հաղթահարելով, իրականում տեստն անորոշ է:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ են Հիսուսը և Նրա առաքյալները բոլոր մյուս Սաղմոսներից հենց այս Սաղմոսը ամենաշատը մեջբերում:
2. Ո՞րն է Աստծո կողմից ուղղակի Սաղմ . 110:1 և 4 համարների մեջբերելու կարևորությունը:
3. Այս Սաղմոսում որտե՞ղ ենք գտնում Մեսիայի մասին որպես մարգարե, քահանա և թագավոր ակնարկը:
4. Ինչո՞ւ են այդքան տարբեր թարգմանություններ եղել Սաղմ . 110:3 և 7-ի համար: